



ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅԺԸ. 1869 — ԳՍԱՆԵՐՈՐԴ ԵՅԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ԱՊՐԻԼ

ՆՇՄԱՐԲ ԵՒ ՆՇԽԱՐԲ

Ի Հայաստան Աշխարհի.

(Տես Երես 65)

Դ. Պոնտոսի մայրաքաղաքէն կ'երթանք Հայաստանի հիմկու մայրաքաղաքը . Տրապիզոնէն յէրգիրում . ետքինս՝ թէ և բուն Հայոց թագաւորանիստքաղաք եղած չէ , բայց գոնէ կէս Հայաստանի մայրաքաղաք սեպուած է 1450 տարիէ վեր . երբեմն Յունաց (Բիւզանդիոյ) իշխանութեան բաժին եղած Հայաստանի , յետոյ Արաբացւոց , հիմայ ալ Յսմանեանց . և դարերէ վեր Հայաստանի ամենէն մարդաշատ քաղաքն է . քաղաքական , զինուորական , և առևտրական տնտեսութեամբք ալ առաջին քաղաքն ըլլալով օտար չէ մայրաքաղաք ըսելս : Տրապիզոնէն մինչեւ մեր քաղաքը՝ միջոցն շիտակ գծով հարիւր մղոնի չափ է . որ եթէ դուրան երկիր մ'ըլլալ՝ երկալթուղին կընար զմեզմէկ օրուան մէջ տանիլ բերել ասկից հոն և անկից հոս . հիմայ՝ միայն երթալու

կամ գալու համար հինգ վեց օր պէտք կ'ըլլայ , կամ աւելի՝ ըստ եղանակի տարոյն և ընտրուած ճամբուն . վասն զի երկու երեք կողմէ ճամբայ կայ , թէ և ամենն ալ անհարթ . անոր համար հիմայ ձեռք զարնուած է շտկելու դիւրին ճամբան . և փափագելու է որ դարձեալ շխափանուի : Սովորական բանած երեք ճամբաներէն ամենէն դիւրին՝ բայց և ամենէն երկայնն՝ ամենէն ալ արևմտադոյնն է . կիւմիւշխանէի վրայով կը տանի 'ի Բարերդ , անկէ 'ի Կարին . ամենէն կարճ բայց ամենէն զժուարինն և ձմեռ ատեն անգնալին՝ է ամենէն արևելեանն , որ լերանց տափերուն վրայ ունեցած արօտներուն համար՝ Զայլրիար կ'ըսուի . իսկ միջինն թէ դիւրութեամբ թէ երկայնութեամբ միջակ է . բայց այս ալ զրեթէ անանցանելի է 'ի ձմրան . և առջինին հետ կը միա-

նայ՝ ի բարերդ : Իմ բոնած ճամբաս այս միջինն էր :

Տրապիզոնէն ինչուան առաջին լեռանց անցքը՝ 20—25 մղոնի չափ է . ճամբան հիմայ բաւական աղէկ շտկուած , Տէկիրմէն տէրևսի գետոյն ձախ կամ արևմտեան կողմէն կ'երթայ . հին ատեն այս Տրապիզոնի գետս Պիրսիդ կամ Պիրքսիդէս կ'ըսուէր , գուցէ Տօսախուտ նշանակելով . ասոր մէկ (արևելան) ճիւղին ծայրը՝ Յոյնք Ս . գէորգայ վանք մ'ունին . երկու ճըղերուն միջոց է Խօջողան լեռն , ուր երիտասարդ կտրիծ մը , կ'ըսեն , կը աիրէր սուլդան Մէջէմէտի այս կողմերս եկած ատեն , որ իր ձեռքով սպաննեց կտրիծը , յետոյ զղալով՝ այսպէս անուաննեց տեղը : Գետոյն միջին ճիւղն կ'ըսուի Մէյրէմանէ . վասն զի անոր աղբերականց քով՝ բարձր և գժուարելանելի լերան մը վրայ շինուած է Տիրամօր վանք մը Յունաց , Սուրմելա կոչուած , ուր Սինայ լերան վանքին պէս՝ միանձունքն սանդղօք և չուանօք կախուած կ'ելլեն կ'իջնեն . և որ արծուի բոյնի մը պէս քարալերան գագաթը զրուած՝ բարձրէն կը դիտէ զծով և զցամնք . բայց ալ աւելի խորագոյն դիտեր է տէրութեանց փոփոխութիւնը . Տրապիզոնի կայսերութեան վերցուիլը տեսաւ , ինքն անշարժ մնաց . աշխարհակալ սուլդանն , կ'ըսուի թէ ասոր հրաշագործ Տիրամօր պատկերին երկու հատ գերանաձեւ մոմխաւրեր է , և եկեղեցւոյն գմբէթները կապարով պատեր է :

Այս Մէյրէմանէ վտակն կը խառնուի արևելեան կողմէն եկած վտակին՝ որ Մաշուգա կ'ըսուի . Երկուքին անկեան միջոցն է ձէվիզլիկ դիւղաւանն , և ըստ Յունաց Քարինիա . գեղեցիկ դիրք և բուսաբերութիւն . ոչ միայն ընկուզենք այլ ինչուան և թզենիք կը գտուին . իսկ վայրի և ընտանի ծաղիկք անբաւ : Ասկէ քիչ մը վարով է քարաշէն հնգակամար կամուրջ մը , ուսկից ճամբան երկու կը բաժնուի , մէկն յարևմուտք՝ ի կիւմիւշանէ կը տանի , միւսն՝ որ իմ բոնածս է՝ դէպ յարևելք դար-վեր

կը հանէ : Ընկուզուտէն չորս ժամ և Սումելայէն երկու ժամ հեռանալով լեռներու մէջ կ'ելլենք . ուր իբրև 5550 ոտք ծովուն երեսէն վեր կը համսինք Գարյագաւան կամ կէպան գիւղը՝ լեռանց կը մէջ զոր կը նշանակէ գեղին անունն ալ , որ է կապան ըստ Հայոց , ինչպէս որ մերայինք կ'անուան լերանց նեղուցքը . և շատոնց այսպէս ըսուած ըլլան՝ կը վկայուի Տրապիզոնի կայսերաց և ձենովացւոց դաշնագրութեան մը մէջ յամին 1314 , յորում Գապանում Տաբասու կ'անուանի կապանն , Ընկուզեաց կամուրջն ալ Pons Carinii (թէ որ չուզենք կարնոյ կամուրջ անուանել) . կայսրն կը խոստանար պաշտպանելու ձենովացւոց վաճառաբեր կարաւանաց . այն ատենէն և աւելի առաջուց ալ՝ Հնդկաց և Պարսից վաճառքն այս և ուրիշ լերանց գագաթներէն կ'ելլէին կ'իջնէին , ի կարին և ի Տրապիզոն կը հանգչէին ժամանակ մը . կարին վաճառուց մեծ փնդուկ մէր , Տրապիզոն՝ կարնոյ նաւահանգիստ կը նայ ըսուիլ : —

Սեւ կապանէն դուրս կամ վեր ելնելուգ՝ նոր աշխարհ մը կը տեսնես , որ շատ հաճոյ չէ աշաց , թէ և ձիւնապատ չըլլան բարձունքն՝ աղէկ եղանակի մէջ , սակայն միշտ չոր ու տկլոր են . ծառերն կը նուազին , ժայռերն կը բազմանան . ժամերով ճամբայ կ'ըլլուի , գեղ մը չերեար . հազիւ տեղ տեղ առանձնակ տուներ կամ հիւղեր՝ բարձրաւանդակի մը վրայ տնկուած , բոյնի կամ դիտարանի նման . որ արդարև կը յիշեցընեն հին 2000 ամեայ աշխարհագրաց նկարագիրն այս կողմերուս ցեղ մը բնակչաց , որք Միասիւնիք կ'ըսուէին , գուցէ Միասիւնիք , վասն զի կ'ըսեն թէ սեան պէս նեղ աշտարակաձեւ տուներ ունէին և մէկմէկէ շատ հեռու : — Հասնինք ուրիշ կապանի մը , որ առջինէն շատ աւելի բարձր է , զրեթէ 9000' ծովուն երեսէն վեր , Խորլադ ըսուած լեռանց մէջ , Քորշապատ-պօղազ կոչուած՝ ի Թուրքաց . լեռներն ալ Խաղտահայոց լեռներն են և անջրպետք Հայոց և Պոն-

տոսի ջրերուն : Այս տեղս արժանի է Հայոց բարձր սահմանաքար մը կամ դուռ մը սեպել . և յիրաւի բնապատում աշխարհագիրն Պլինիոս՝ Խաղտանայոց Փահակ կամ կապան կը կոչէ , Պյլæ կամ Fauces Armenochalybes : Հայաստան աշխարհաքաղաքը շինող ճարտարապետուն , Տէրն , այսպիսի դրոներ ալ հագուցեր էր անոր լեռնապարսպաց . և այսպէս ճանչցեր էին բնիկք և օտարք . ինչպէս որ տեսանք այս հիւսիսային արևմտեան դրան անունը . այսպէս ալ Հայաստանի արևմտեան հարաւակող մը կար ծանօթ Հայոց Փահակն կամ Դուռն , Արտեութ Պյլæ , Կէրկէն գալէի քով , Եփրատայ և Տօրոսի անձուկներուն մէջ : — Հարաւակողմը կային քանի մը Դրունք կամ Պահակք , զոր Բիւղանդեան Յոյնք քէլիզուրա (փականք) կոչէին , և անկէ ոմանք մերայինք ալ կլեսուր կամ լեսուրք անուանեցին , ինչպէս կլեսուրք Աղձնեաց և կլեսուրն Զերմաձորոյ որ և Ասորեստանի դըրունք , որ կամ զատ կամնոյն իսկ Բաղիշու և Ռահվայի ճամբան էր , որ հիմայ սովորական բանածն է այս կողմէն : — Ա՛լ աւելի յարևելք Երթալով՝ Հայոց և Ատրպատականի միջոց՝ Զարասպ լերանց անցքը կայ , քովն ալ Հայք անունով գեղմը : Իսկ Հայոց բուն արևելեան կողմը մասնաւոր դրան պէտք չունէր , վասն զի քիչ մը հեռուն կասպից ծովնէր , վասն զի քիչ մը հեռուն կասպից ծովնէր , սեպելի հռչակաւոր Պահակն կամ Դուռն որ զանազան անուամբք կը կոչուի , ձորայ , Հունաց , Գարբանտայ , Երկարի , Աղուանից , և այլն . բուն Հայոց սահմաններն ինչուան հոս չէին հասներ . բայց մեր հզօր թագաւորներուն ձեռքն հասան . նաև Վարդանանք այս Դրանս տիրելով՝ իրենցմէ արբայազարմ իշխանի մը պահպանութեան յանձնեցին . իսկ Հեթում Պատմիչ ինչուան հոս կը հասցունէ Հայոց սահմանները : Այս աշխարհածանօթ կովկասեան լերանց պարապաց մէջ , (վասն զի պարսպի

պէս երկայնաշար ձգուած են Սեաւ և կազրից ծովուց միջոց) , քանի մ'ուրիշ դըռներ կամ կապաններ կամ անցքեր ալ կան , բայց մէկ հատն է ամենէն նշանաւորն , Դուռն Ալանաց , որ հիմայ ալ Տարի-Ալան կ'ըսուի նոյն նշանակութեամբ , և Հայաստանի հիւսիսային Դուռն կընայ ըսուիլ , և ատեն մը յիրաւի ինչուան հոս ալ հասած է Տրդատայ իշխանութեան սահմանն . իսկ իր հայրն Խոսրովով ոչ միայն ձորայ պահակէն անդին արշաւեր էր իր հօրը մահուան վըրէմն առնըլու , այլ և բոներ էր այն դուռը իրեկ սեփական իրեն , ինչպէս որ Ագաթանգեղոս կ'իմացընէ . « Սկաս » նէր Խոսրով . . . բանալ զԴրունս Ալաւ « նաց և զիւրոյ պահակին , հանել » զզօրս Հոնաց , ասպատակ զնել 'ի » կողմանս Պարսից » : Այսպիսի դըռներ ունող , և ուղած ատեն փակող և բացող տանուտէր մը՝ հարկաւ հզօր և հարուստ պէտք էր ըլլար , Մեծ ոմն . տնուորքն ալ կընային խաղաղ և երջանիկ ապրիլ :

Ե . Խաղտահայոց դոնէն անցնելով վերջին բարե մ'ալ տուի ծովուն՝ զոր այսպիսի բարձրութենէ մը կը նշմարէի միայն արեւու ճառագայթներով փայլած հայելոյ կտորի մը պէս . և գարձայ դէպ յարևելեան հարաւ , ուր նոր տեսակ ծով մը՝ մանաւանդ թէ ալիք՝ սկսան երենաւ . ոչ ընդարձակութիւն դաշտաց , ինչպէս որ բարձր լեռնէ նայող մը սովորաբար կը տեսնէ ցամաքի վրայ , այլ մրրկած և փրփրած ծովու մ'երես . սեւ ու ճերմանկ ալիքներու նման՝ լերանց կոհակներ , լերկ ու մերկ , որ տիրական զգացմունք մը կուտան տեսողին , մանաւանդ եթէ ամառն հասած շըլլայ . գեռ շատ լերանց և լեռնադաշտից վրայ ձիւնն տարածուած է . կանաչ պատ մը կամ սիւն մը բնաւ չերկիր , այսինքն ոչ անտառ և ոչ ծառ . ասիկայ մեր աշխարհին հիմկու մեծ բնական պակասութիւնն է , զոր ամեն ճամբորդք կը յիշեն . և կրդիրումէն մինչև 'ի Պավորէժ երկրին մէկ ծայրէն մէկալ ծայրը՝ ծառ մը չտեսանք կ'ըսեն .

և սուտ ալչէ՝ այն կարաւանի ճամբռուն
վրայ , մանաւանդ եթէ ձմեռն ըլլայ :
Բայց 'ի հարկէ աղէկ եղանակին կը
տեսնեն դաշտաց և լեռնատափից պքան-
չելի կանաչութիւնն ալ , հարուստ ա-
րօտներով , վայրի ծաղկամբք և թփովք ,
որովք 'ի սկզբանէ հռչակուած էր Հայա-
ստան , իրբե աղէկ և ընդարձակ տե-
ղուանք ունեցող ոչխար և պախրէ և
ձիան արածելու . ինչուան հիմայ ալ
այնպէս է . կը տեսնեն անշուշտ և կը
վայելեն ալ երկրին առատ և համեղ
բանջարեղէններն և ընդեղէնները . նաև
անուշակ և ընտիր պտուղները՝ որ քիչ
մը ցած դաշտաց և հովտաց մէջ առաջ
կու գան , և նաև վանայ 5000 ոտք
բարձր ծովադաշտին եզերքը . իսկ ցորեն
և ուրիշ արմրտիք ինչուան 6000 ոտք
բարձրութեան վրայ կը գտնեն . լեռ-
նային բոյսեր և ծաղիկներ նաև 10,000
ոտք բարձրութենէ վեր ալ : Կրնան տես-
նել նաև ոչ քիչ անտառներ՝ բասենի
անփայտ դաշտէն քիչ հեռու Սողանլու
լերանց երեսը . Բաղիշու և Մոկաց մի-
ջոցը ընդարձակ կաղնեստան , որոյ հա-
մար փայտի աշխարհն կոչուած էին
այն կողմերը . մեր աշխարհին հիւսի-
սային մասին՝ Գուգարաց աշխարհին
մէջ կան շատ անտառներ և մշտադա-
լար ծառեր . արևելեան կողմը՝ անուա-
նի էին և են Արցախոյ մայրիքն . ան-
կից գէպ 'ի հարաւ ոլորելով՝ Սիւնեաց
երկրին և անկէ երասխ գետով բաժ-
նուած երկրին արդի անուններն՝ Գա-
րապաղ և Գարատաղ՝ վկայ են ծառոց
և անտառաց . թողունք ուրիշ կողմերը :
Եւ եթէ մէկն Հայաստանի գետնին ընդ-
հանուր բարձրութեանը նայելով (2500
ոտքէն ինչուան 6000) չհաւատայ այս-
չափ ծառ ու փայտ բերելուն ալ՝ կըր-
նանք նաև յիշեցընել իրեն որ հին ա-
տեն աւելի շատ էին հոն անտառք ,
բայց անհոգութեամբ կտրուելով և նոր
չտնկուելով՝ պակսած են , և ումանց
հետքն կ'երևին մինչև այսօր . և տեղ
տեղ հին և ահեղ ծառեր ալ կան . վկայ
ըլլայ Ուրտապարի հրապարակին սօ-
սին , որ երկրիս ծանուցեալ ստուարա-

գոյն ծառոց մէկն է : — Այս խօսքեր-նուս զարտուղութիւնն ալ վերջացընելով՝ ճամբայ ելլենք :

Արևմտեան (կիւմիւշանայի) ճամբան թողլով՝ զարձայ յարեելք . երկուքին միջոց լեռ մը կայ կորում կամ կորում անուամբ, ասոր վրայէն ալ պէտք եղաւ անցնիլ, որ գրեթէ 9000 ուգք (8940) բարձր է . և արևմտեան ստորոտը համանուն գիւղը կայ, իմ ճամբէս գուրս և արժանի հետաքննութեան . վասն զի բնակիչքն յատուկ բարք և կրօնք մ'ունին կէս կէս, դրաէն մահմետական ներսէն քրիստոնեայ . և իրքն զատ ազգ կամ ժողովուրդ մը կրումցի՝ կրումու կ'անուանին 'ի Տրապիզոն . լեզունին յունարէն է . արուեստով շատերն որ մնադիր են, և կը բնակին կիւմիւշանէի գեղերուն և նաև քաղքին մէջ ալ: Երբ (1856) կրօնից ազատութիւն հրատարակեցաւ՝ շատերն համարձակքրիստոնեայ երեցան և պաշտպանութիւն գտան Յունաց եպիսկոպոսէն և Եւրոպացի հիւպատաներէն : — Գուցէ աւելի ևս հետաքննութեան արժանի է ուրիշ ժողովուրդ կամ ցեղ մ'ալ որ այս կողմերուս հին անուամբը մինչև հիմայ Խալիթ կը կոչուի, և անծանօթ չէ Տրապիզոնացւոց, բայց կարծեմ ոչ ոք քրննած է ազգագրական և լեզուաբանական տեսութեամբը . ինծի երեցածն այս է՝ որ ասոնք են բնիկ սերունդը կամ մնացորդը Խալիթեաց հին ազգին, ուրուն հետ խառնեալ և խնամացեալ Հայք՝ ըստեցան Հայախաղութիք կամ Խաղուահայք . հին Յոյն և Լատին հեղինակք քիչ անգամ Խալիթ կամ Քալտէի (Քաղդէացիք) կ'ըսեն ասոնց, այլ աւելի յաճախ Խալիթը կամ Ալիրը, զորինչուան Հոմերոս Խակ կը յիշէ . ազգին հետ արուեստն ալ խմանալով, որ է բռվագործք, պղնձագործք, երկաթագործք . և զնոյն կը ճշմարտէ իրենց հիմկու բնակութիւնն ալ այս կողմերս, դէպ 'ի կիւմիւշանէ և 'ի Բաբերդ: Այս ետքի յիշեալ տեղս՝ Խաղուեաց գրիսաւոր կենդրոն սեպուեցաւ մեր պատմութեան ծանօթ ատենները և իրւ-

զանգացւոց կայսերութեան առջի դարերուն . Բաբերդ՝ աւելի հին ատեն՝ Սպեր աշխարհին կամ գաւառին մասն եղած կը թուի , յետոյ առանձին գաւառ մ'եղած , և չայոց աշխարհաց հետ միացած . որով Խաղաղիք երբեմն բնիկ Մեծ Հայոց մասն կը սեպուին , երբեմն դրակից և վիճակակից աշխարհ մը , նման Փոքր Հայոց : — Ահա այս (Բաբերդու) երկիրն է որ կը մտնենք հիմայ , Պոնտոսի և Հայոց ջուրերը զատող լեռներէն իջնելով . արդէն ձորոխի օժանդակ գետակներուն հեռագոյն և առաջին վտակ մը՝ թողուած Պղնձահանքի մը (Մատեն-խան) և քարաշէն կամուրջին (Թաշ-քեօփրիշ) քովիչն անցնելով՝ կ'երթայ , կը տանի կը մոցընէ զմեզ մեր բնիկ աշխարհը :

Զ. Մեր՝ կամ բնիկ Հայախաղտեաց սահմանին վրայ առաջին հանդիպած շէնքն է պատի գիւղիկ մը , բայց անուշիկ հայկական անուամբ վզեռնիկ , որ կարծես թէ իր անուան համեմատ այս Փոքր և Մեծ Հայոց , կողքիսի և Պոնտոսի լերանց միջոց երկընցած երկընին վզին վրան է , 5843 ոտք բարձր՝ ծովուն երեսէն : Այն վտակն՝ որ ասոր քովիչն կ'անցնի կ'երթայ 'ի Բալահոռ՝ անոր անուամբ կը կոչուի . հարաւային կողմէն կու գայ Լորի կամ Մաման-սու վտակն . երկուքին միջէն՝ Մասատ , որ անոնցմէ մեծ է , և իրարու խառնուելով կը ձևացընեն ձորոխ գետը , որ մեր աշխարհին չորս մեծ գետերէն վերջը՝ մեծագոյնն է ուրիշ գետերէն . միայն այս Բաբերդու և Սպերու գաւառներն ու Տայոց աշխարհը կ'ոռոգէ 'ի Հայս , և կը դառնայ 'ի հիւսիս կողքեաց կամ Եգերաց աշխարհը կ'իջնէ , ու անոնց բընիկ գետը (Ոճարա) առնըլով՝ կը թափի 'ի Սեւ ծով կիւնեէի և Պաթումի միջոց : կարծուի թէ Ս . Գրոց յիշեալ Փիստն գետն ալ այս է , որ կը պատէր զերկիրն Խաւիլատայ կամ Եւիլատայ , և յիրաւի ձորոխ կը պատէ նախ Խաղտեաց երկիրը , վերջը ուղղակի 'ի հիւսիս կ'ընթանայ :

Վզեռնիկէն անցանք 'ի Խաղտակ ,

անկէ 'ի Բալահոռ , թողլով ուրիշ իշեաններ , և Ղավուխ սրածայր լեռը , ուսկից կ'անցնին ոմանք կիւմիւշսանէ կամ Գարահիսար (Շապիսանէ) երթալու համար . 1829էն Ռուսաց հոչակաւոր Բապէւիչ զօրապետն՝ ինքնին ձիով ելաւ այս լերան վրան Օսմանեանց բանակը զիտելու : Բալահոռի դիրքն (5020 ոտք ծովուն երեսէն վեր) Բաբերդու գաշտին բերանը , ուրիշ մերձակայ գեղերէն աւելի բազմամարդութիւնն և ալ աւելի բնակարաններու հետքեր՝ կ'իմացընեն որ հին ատեն նշանաւոր տեղ մ'եղած պիտի ըլլայ , գոնէ Միհրդատայ և Լուկովոսի պատերազմաց ատեն : Շատ տարի չէ որ պղտի զպրոցիկ մը հաստատած են հոս մերազգիք իրենց եկեղեցւոյն քով , բայց բնակչաց մեծ մասն այլազգիք են , որք երկու դար առաջ գրեթէ բնաւ չկային հոս , բոլորն ալ հայազգի էր . 1694էն հոս գիշեր մ'անցուց ձեմելլի խտալացի երևելի ուղերին , և հոն գտաւ հայագէտքարոզիչը Հ. Վիլոդ , որ ժողովրդեան քրիստոնէական վարդապետութիւն կ'ընէր , և դիւրաւ սովորեցընելու համար Բարեպաշտիկ Խաղաղ մը հնարեր էր , որով աշակերտքն ալ բազմաթիւ կ'ըլլային , մեծ ու պղտիկ :

Բալահոռէն ինչուան 'ի Բաբերդ՝ հինգ ժամու ճամբայ է . այս միջոցս կան շատ հայանուն գեղեր , որոնք պատմական նշանակութիւններ ալ պէտք է ունեցած ըլլան . ինչպէս Օձուեղ , ուսկից էր գիտնական վարդապետն Սրապիոն Ժ. Պարուն վերջը , որ առաջնորդ եղաւ մօտաւոր Վահանաշէն կամ Վահանշէն վանքին , ուսկից հեռու չէ Ս . Լուսաշորչի վանքն ալ , որուն պատերուն վրայ օձի նմանութիւններ կը գտնեն բնակիչք տեղւոյն , և անկէց գեղին անունն ալ . — Գազի , ուսկից էր Վարդան Յովնանեան զիտուն արքեպիսկոպոս Հայոց Լեհաստանի 'ի վերջ Ժ. Պարու . և այլն : Ասոնցմէ աւելի նշանաւոր է Բաբերդէն երկու ժամ հեռի հիւսիսակողմը Վարդուհան աւանն , գուցէ Վարազ-աւան կոչուած հին ատեն . ա-

նունն , պարսպաց մնացորդքն , աւերակը եկեղեցեաց , որոց թիւը 24⁴ կը հանեն տեղացիք , թէ և հիմայ միայն իրեքն որոշ կ'երևին , կ'իմացընեն որ նշանաւոր տեղ մը , քաղաք մ'էր հին ատեն . բայց պատմութեանց մէջ չեմ յիշեր . իսկ կիսաւեր եկեղեցեաց մէկուն մէջ սեան մը վրայ թուական մը կայ 500 տարիէ հին , « ԶԶԹ (1340) 'ի բարեխաւս ֆռանկին » . որ ֆռանկ անունով մէկու մը յիշատակ խաչ մը քան գակուած կը նշանակէ . իր 2000 տանց տեղ , ինչպէս որ կ'աւանդեն թէ ունէր , հիմայ հազիւ 20 տուն կայ : Բայց այն եկեղեցեաց մնացորդներուն մանր քան դակներն , կիսակործան գմբէթներն , վայելուչ ձեերն , և մանաւանդ պատերուն գունաներկ պատկերներն բաւականէն աւելի կ'իմացընեն տեղւոյն հարըստութիւնն և բարգաւաճնքը . փոքրիկ Անի մը կրնանք ըսել , գուցէ գենուացոց վաճառականութեամբալծաղկած . ասկէ 150 տարի առաջ լատին քարողիչ մը (Հ . Մոնիկ) այսպէս կը գրէ այս տեղէս անցնելով (1741) . A juger de ce lieu par les mesures de deux grandes églises ornées de mosaïques , et par les autres restes d'un grand mausolée , il est à croire qu'il était autrefois plutôt une ville qu'un village . Կ'երեի թէ պատիկ գմբէթաւոր եկեղեցին է ուասոլէ (շիրիմ) կոչածը : Ամեն տեսնող ճամբորդք հիացեր են այս շէնքերուս վրայ . որոց մէկն ալ եղած է անշուշտ՝ վերոյիշեալ լատին քարողչն առաջ Երանելի տէր կոմիտաս Նահատակին եղբայրն՝ Երեմիա Զէլէպի . « Տեսաք աչօք . . . (կ'ըսէ) 'ի Բար » բերդու գաւառն կամարակապ եկեր » ղեցիք , յօրինեալ պատկերք , զորս » 'ի նկատելգ՝ կարծէ ոք թէ վարպետն » նոր է նկարեալ զպատկերսն . և սուտ » չասեմթէ պակաս լինի արհեստ նըր » կարին քան զբունաց նկարեալ . հիաւ » ցուցանէր զմեղ և լացուցանէր զտեր » սողս . հինգ դրամք եկեղեցի և հինգ » խորանաւ , և 80 փէնչէրէիւ . յորոց » միջի հօտք դավրից (ոչսարաց) պատ-

» կէին » : — Միայն այս տեղս չէ որ դավարները՝ տաւաղած տեսանք և լացինք . այսպէս էր Անին ալ , և ուրիշ հին քաղաքատեղիք , մայրաքաղաքք չայոց . հոն ալ լացինք , կու լանք և պիտի լանք . և մինչև ցերք . . . : Կրնանք արդեք վայրկեան մը մսիթարուիլ տեսնելով այսպիսի աւերակաց նշանարիկ մը , պատկերիկ մը , ստուերիկ մը

Կը շարունակուի :

Բարոյական և քաղաքական տնտեսութիւն :

(Տես երես 53)

Զ . ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընկերութիւն , և իրեն մարդկանց ընձայած շահերը :

Միրըպոյի մէջ 1847 տարին ձախորդ գուշակութիւններով սկսաւ . սոսկալի արագութեամբ կ'աճէր ցորենոյն զինը : Մեծ տագնապ տիրած էր ամենուն մտացը մէջ . մենավաճառաց նկատմամբ միայն տրտունջ կը լսուէր՝ որոնք կ'արգելուին , կ'ըսուէր , ցորենին վաճառանց բերուիլը , և գուրս երևացածն ամբողջ կը գնէին , յետոյ մեծագին տոկոսեզ ծախելու համար : Ամեն տօնավաճառ ըլլալուն՝ յուղմնոնքը կ'առաւելուր և գաշանց աղատագրութեան վախ կար : Արդէն՝ ինչպէս ըսինք , շատ գաւառներու մէջ մեծամեծ շփոթութիւններ ծագեր էին և մերձաւոր քաղաքին հանգստութեանը վրայ կը սկսէին վախնալ :

Եւ որ մեծապէս երկիւղալին էր՝ հանդիպեցաւ մի և նոյն ժամանակ . ցորենին սղութիւնն ստիպելով ուրիշ բաներու համար գործածուած ստակին մէկ մասը հացի ծախել՝ շատ տեսակ ապրանց սպառումը նուազեցուցեր էր : Վաճառմանց այսպէս պակսելուն պատճառաւ մանրավաճառք դադրեր էին գոր-